

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 19

ք. Արտաշատ

< 11 > 02 2013թ.

2013 թ. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ
ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍԵԼԱՎՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ,
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16 - թի հոդվածի բ և դ կետերը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 20 - թի կետի պահանջները, 2013 թ. գարնանային հեղեղումների և սելավների կանխարգելման, հետևանքների նվազեցման միջոցառումների իրականացման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Առաջարկել մարզի հեղեղավտանգ և սելավավտանգ գոտու համայնքների ղեկավարներին՝ համաձայն հավելվածի.
- 1) Հեղեղումների սպառնալիքի կամ վտանգի դեպքում համայնքի վտանգավոր տեղամասերում իրականացնել արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպել բնակչության և նյութական արժեքների տարահանում.
- 2) Համայնքի ավագանու համաձայնությամբ ընդունել համապատասխան որոշումներ՝ նշված միջոցառումներն իրականացնելու համար:


2. Արարատի մարզային փրկարարական վարչության և մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետին՝

ԱԻ հետևանքով ստեղծված իրավիճակի և կատարած աշխատանքների մասին պարբերաբար զեկուցել:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝



Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ

«Արարատի մարզպետի

2013թ. փետրվարի 11 թիվ 09 որոշման

ՅԱՆԿ

Արարատի մարզի հեղեղավտանգ և սելավավտանգ համայնքների

Ը/Ը	Համայնքի անվանումը	Աշխատանքների կատարման օբյեկտը	Անհրաժեշտ աշխատանքները և ծավալները	Նշումներ
1	2	3	4	6
1.	ք.Վեդի	Վեդի գետ	գետի հունի մաքրում՝ մոտ 2000մ, շրջված երկաթբետոնյա պանելների տեղադրում և ամրացում՝ մոտ 35 հատ	
2.	Ավշար	Վեդի գետ	գետի հունի մաքրում և ավերի ամրացում՝ մոտ 700մ	
3.	Վանաշեն	Վեդի գետ	շուրջ 500մ գետի հունի մաքրում և ավերի ամրացում	
4.	Եղեգնավան	Վեդի գետ	գետի հունի մաքրում և ավերի ամրացում՝ մոտ 900մ	
5.	Այգավան	Վեդի գետ	գետի հունի մաքրում և ավերի ամրացում՝ մոտ 300մ	
6.	Արևշատ համայնքից մինչև ՌԴ սահմանապահ զորքերի 5-րդ ուղեկալի ընկած հատված	Ազատ գետ	գետի հունի մաքրում և ավերի ամրացում՝ մոտ 9000 մ	
7.	Բյուրավան	Ազատ գետ	գետի հունի մաքրում՝ մոտ 500մ, ավիապաշտպան հատվածների ամրացում գաբիոններով՝ մոտ 100մ	
8.	Դեղձուտ	Ազատ գետ	գետի հունի մաքրում՝ մոտ 1000մ, ավիապաշտպան թմբի վերականգնում՝ մոտ 100մ, վտանգավոր հատվածների գաբիոնապատում՝ մոտ 280մ	
9.	Բուրաստան	Ազատ գետ	գետի հունի մաքրում՝ մոտ 2000մ, 5-րդ ուղեկալի տարածքում ավիապաշտպան հատվածների ամրացում գաբիոններով՝ մոտ 200մ	
		Արաքս-Հրազդան կղզեկտոր	Աջակողմյան ափի գաբիոնապատում՝ մոտ 400մ	
10.	Լուսառատ	Արաքս գետ	8-րդ ուղեկալի հատվածում գտնվող Արաքս գետից դեպի Կախանովի	

			ջրանցք գնացող ջրթողի վերանորոգում, կամուրջի ապամոնտաժում և բարձրացում	
11.	Սիս, Սայաթ-Նովա	Հրազդան գետ	համայնքների հարևանությամբ գետի մեջ ընկած երկաթյա կամուրջի գետից դուրս բերում, գետի ձախակողմյա թմբի ամրացում՝ մոտ 100մ	
12.	Սայաթ-Նովա	Հրազդան գետի ձախակողմյա կոլեկտոր	կոլեկտորի հունի մաքրում՝ մոտ 500մ, ձախակողմյա թմբի բարձրացում 1մ-ով	
13.	Նարեկ, Քաղցրաշեն	Նարեկի սելավատար	գետի հունի մաքրում և ափերի ամրացում՝ մոտ 3000մ, որից 400մ գաբիոնային	
14.	ք.Արտաշատ	Արտաշատի հեղեղատար	գետի հունի մաքրում՝ մոտ 500մ	

Աշխատակազմի ղեկավար՝



Ա. Վարդանյան